ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կենսաթոշակային ապահովության ոլորտի ներկայացուցիչների խորհրդակցությանը մասնակցելու նպատակով Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**
   Սմբատ Սաիյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2019 թվականի փետրվարի 21-22-ը

4. **Հրավիրող կողմը՝**
   Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը՝**
   Մասնակցություն Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կենսաթոշակային ապահովության ոլորտի ներկայացուցիչների խորհրդակցությանը

6. **Քննարկված թեմաները**
   1) Մաքսային վճարների բաշխման համար կիրառվող ընթացակարգերը կենսաթոշակների գումարների վճարման (բնակության երկրի լիազոր մարմնին փոխանցելու) համար կիրառելիության հարցը
   2) «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի կիրառման կարգի նախագիծ (այսուհետ՝ Կարգի նախագիծ)

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Խորհրդակցությունները վարում էր Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային միգրացիայի և սոցիալական պաշտպանության վարչության պետ Պ. Ու. Սույումբաևան:

Խորհրդակցության ընթացքում ԵԱՏՄ անդամ պետությունների Կենտրոնական (Ազգային) բանկերը տեսակապի միջոցով ներկայացրեցին իրենց դիրքորոշումը առաջարկվող ընթացակարգերի վերաբերյալ (ներկա էր միայն ՌԴ ԿԲ ներկայացուցիչները):

Մասնավորապես, ՀՀ ԿԲ ներկայացուցիչները նշեցին, որ մաքսային վճարների բաշխման համար կիրառվող ընթացակարգերը կենսաթոշակների վճարման համար կիրառելի չեն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մաքսային վճարների բաշխման համար կիրառվում է միասնական արժույթ՝ ԱՄՆ դոլար:

Իսկ կենսաթոշակների վճարման համար անհրաժեշտ է բացել հաշիվներ 4 արժույթներով, որի դեպքում առաջանում են արժույթային ռիսկեր:

Գրեթե նույնական դիրքորոշում ներկայացրեցին նաև մյուս երկրների Կենտրոնական (Ազգային) բանկերի ներկայացուցիչները:

Քննարկվեցին նաև Կարգի նախագիծը:

Մասնավորապես, կենսաթոշակային համակարգի միասնականությունն ապահովելու նպատակով, մեր առաջարկությամբ Կարգի նախագծում ներառվեց դրույթ, որի համաձայն՝ ՀՀ-ում կենսաթոշակը վճարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով (այն կարգով, ինչ կարգով վճարվում է ՀՀ մյուս կենսաթոշակառուների կենսաթոշակները):

Միաժամանակ, Կարգի նախագծում ներառվել է դրույթ, որի համաձայն՝ հեռակա կարգով բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնելու դեպքում, եթե անձի բնակության վայրի բուժհաստատությունից ստացվում են օտար լեզվով լրացված բժշկական փաստաթղթեր, ապա թարգմանությունն իրականացնում է այն կողմը, որը իրականացնում է բժշկասոցիալական փորձաքննությունը: Այս դեպքում, ՀՀ-ի համար կարող են առաջանալ լրացուցիչ թարգմանչական ծախսեր կատարելու անհրաժեշտություն:

Քննարկվեցին նաև կողմերի առաջարկությունները Կարգի նախագծի վերաբերյալ, ինչպես նաև կարգի նախագծի այլ դրույթներ

8. Քննարկման արդյունքում որոշվեց՝

1) Եվրասիական տնտեսական հանձնաժողովը պաշտոնապես դիմում է Կենտրոնական (Ազգային) բանկերին՝ մաքսային վճարների բաշխման համար կիրառվող ընթացակարգերի վերաբերյալ պաշտոնական դիրքորոշում (առկայության դեպքում՝ այլընտրանքային մեխանիզմների վերաբերյալ առաջարկություն) ներկայացնելու հարցով,

2) «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի կիրառման կարգի նախագծի լրամշակված տարբերակը և քննարկման

արձանագրությունը Եվրասիական տնտեսական հանձնաժողովը ուղարկում է կողմերին՝ պաշտոնական դիրքորոշում ստանալու համար,

3) Հաջորդ հանդիպումը (քննարկումը) նախատեսել մարտի վերջին՝ Կարգի նախագիծը ևս վերջնական տեսքի բերելու և ներպետական համաձայնեցման նպատակով կողմերին ուղարկելու նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Պաշտոնական առաջարկությունները Հանձնաժողով կներկայացվեն գրավոր՝ կենսաթոշակային ապահովության ոլորտի լիազոր և իրավասու մարմինների ներկայացուցիչների խորհրդակցության արձանագրության համաձայն՝ նրանում նշված ժամկետներում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

27.02.2019 թ